



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՅԵ. ԿԱՐԳԱ

„ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ“
ՊՐՈԲԼԵՄԸ

ՊԵՏՇՐԱՏ 1930 ՅԵՐԵՎԱՆ



ՅԵ. ՎԱՐԳԱ

“ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ”
ՊՐՈԲԼԵՄԸ



ՊԵՏՏՐԱՏ 1930 ՅԵՐԵՎԱՆ

Հրատ. № 1421

Գրառնալ. № 5856 (բ) Պատ. № 1097 Տիրաժ 4000

Պետհրատի լիբրերի տպարան, Յերևանում.


ԱՌԱՋԱԲԱՆ

«Կազմակերպված կապիտալիզմի» թեորիան վերջերս կուսակցական լայն շրջանների քննությունն առարկան դարձավ: Այս թեորիան ժամանակակից ուս-
ֆորմիզմի ամբողջ աշխարհայացքի հիմքը կազմելով քաղաքական մեծ նշանակություն ունի: Այն թեորիան, թե իբր արդեն սկսված և «խաղաղ ներածումը սոցիա-
լիզմի մեջ», այն թեորիան, թե ժամանակակից պետություն-
նը բուրժուազիայի դասակարգային պետություն չի հան-
դիսանում, և վերջապես գերիմպերիալիզմի թեորիան, —
այդ բոլորի հիմքը «կազմակերպված կապիտալիզմի»
թեորիան և կազմում:

Այդ պրոբլեմը ակտուալ քաղաքական նշանակու-
թյուն ստացավ ընկ. Բուխարինի վերջին լեռնաթների
շնորհիվ: Թեպետ վաղուց արդեն հայտնի չեք, վոր կա-
պիտալիզմի իմպերիալիստական Ֆազի բացատրման
շրջանում ընկ. Բուխարինի հալացքները տարամոտում
են Լենինի հալացքներին, բայց այդ տարածայնու-
թյունները նորից քաղաքական նշանակություն ձեռք
բերին միայն այն ժամանակ, չերը վերջերս պարզվեց,
վոր դրանք ընկ. Բուխարինի համար վնչ թե կղզի-
ացված մոմենտներ են հանդիսանում, այլ նրա աջ
թեքման ամբողջ սխառեմի բաղկացուցիչ տարրերն են
կազմում:

Այդ պատճառով ել առավել անհրաժեշտ և այս
խնդրի խորացված անալիզով զբաղվել:

Մենք համառոտ կքննենք այն ավելի կարևոր
պրոբլեմները, վորոնք ծագում են «կազմակերպված կապի-
տալիզմի» թեորիայի կապակցությամբ:



1. „ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԸ» ԳԱՂԱՓԱՐԻ ԲՈՎԱՆՆԻԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ամենից առաջ անհրաժեշտ է ընդգծել, Վոր «Կազմակերպված կապիտալիզմ» գաղափարը հենց ինքը մարքսիստական վերոշում չէ, և յերբ մենք այդ տերմինի տակ կապիտալիստական հասարակության զարգացում, թեկուզ նույնիսկ ավարտված ձևով, ենք հասկանում, այդ դեպքում նա իր մեջ ներքին հակասությունն և պարունակում: Չե՞ վոր իրոք մենք կապիտալիզմի տակ հասկանում ենք ապրանք արտադրող այնպիսի մի տնտեսություն, վորի մեխանիզմը կարգավորվում է արժեքի որոնքով, իսկ այս որոնքը, իր հերթին, պաշտոնավորվում է շուկայի առկայությամբ: «Կազմակերպված կապիտալիզմի» դեպքում, յերբ այդ լրիվ զարգացման հասնի, վորպես համաշխարհային գլխավոր կարտել պետք է գոյություն ունենա միայն մի ձեռնարկատեր, բոլոր արտադրական միջոցների միայն մի սեփականատեր: Այդպիսի հասարակության մեջ չեր լինի վո՛չ շուկա, վո՛չ արժեքի որոնք, վո՛չ մրցություն, վո՛չ ել արտադրության անիշխանություն, հանգամանքներ, վորոնք կապիտալիստական տնտեսության եյա-կան հատկանիշներն են հանդիսանում:

Տեսնենք այժմ, թե «Կազմակերպված կապիտալիզմի» տնտեսության կողմնակիցներն ինչպես են պատկերացնում այս գաղափարը:

Հիլֆերդինգը սոցիալ-դեմոկրատներին Քիլի 1927 թվի կոնգրեսին տված իր զեկուցման մեջ հետևյալ երկ եր վորոշում այդ գաղափարը.

«Ազատ մրցության ժամանակաշրջանը, յերբ կապիտալիզմը կույր ուժերի որենքների իշխանության ներքո յեր գտնվում, մնաց յետևում, և մենք այժմ տնտեսության կապիտալիստական կազմակերպման ժամանակն ենք ապրում: Այլ կերպ ասած, ուժերի ազատ խաղի վրա կառուցված տնտեսությունը կազմակերպված տնտեսություն և դարձել:

Կազմակերպված կապիտալիզմն շանակում է... սկզբունքային փոխարինումը՝ ազատ մրցության կապիտալիստական սկզբունքը պլանային արտադրության սոցալիստական սկզբունքով»:

Այդ վորոշման մեջ վճրն և ճիշտ և վճրը սխալ ճիշտ և այն, վոր «ազատ մրցության ժամանակաշրջանն» անցել է: Այդ փաստը իմպերիալիզմին տված լենինյան վորոշման հիմնական տարրերից մեկն է:

«Տնտեսականորեն այդ պրոցեսսում հիմնականը կանը կապիտալիստական ազատ մրցության փոխարինումն և կապիտալիստական մոնոպոլիաներով: Ազատ մրցությունը կապիտալիզմի և ընդհանրապես ապրանքային արտադրության հիմնական հատկանիշն է: Մոնոպոլիան ազատ մրցության ուղղակի հակադրությունն է: Բայց այս վերջինը, մրցությունը, մեր աչքերի առաջ սկսեց մոնոպոլիայի վերածվել: Այդ առաջացավ խոշոր արտադրություն ստեղծելով, մանր արտադրությունը դուրս քշելով ու խոշորագույնով փոխա-

բինելով, կապիտալի և արտադրության համա-
կենարոնացումն այն աստիճանի հասցնելով, վոր
նրանից առաջացավ և առաջանում է մոնոպոլիան՝
կարտելները, սինդիկատները, արեստները. դրանց
հետ ձուլվում և թվով տասնյակի հասնող,
միլլիարդների հետ գործ ունեցող, բանկերի կա-
պիտալը»։ (Իմպերիալիզմը վորպէս կապիտալիզմի
բարձրագույն ստադիան», հ. XIX, գլ II,
յեր. 142)։

Ու այդ կապակցությամբ Լենինը հակիրճ վորո-
շում է տալիս.

«Իմպերիալիզմը կապիտալիզմի մոնոպոլիստական
ստադիան է»։

Սակայն այն փաստի հաստատումը, թե «ազատ
մրցության ժամանակաշրջանն անցել է», միայն ճիշտ
և իրականության համապատասխանող մոմենտն է հան-
դիսանում այն վորոշման մեջ, վոր Հիլֆերդինգը տա-
լիս է «կազմակերպված կապիտալիզմին»։ Ինչ վերա-
բերում է նրա այն պնդումներին, թե մոնոպոլիաներ
կազմվելով իրր բնդիւսմբապես վերացվում են մրցութու-
նը, կամ վոր կապիտալիստական տնտեսությունը մո-
նոպոլիաների ժամանակաշրջանում կառավարվում է
«պլանային արտադրության սոցիալիստական սկզբուն-
քով», այդ բոլորը բացարձակ կերպով սխալ են։ Չնա-
չած մոնոպոլիաների առկայության, մրցությունը
շարունակում է գոյություն ունենալ, «պլանային
տնտեսության» մասին խոսք անգամ չի կարող լինել։

Մենք կփորձենք նշել մրցության այն տարբեր
տեսակները, վոր գոյություն ունեն մոնոպոլիստական
կապիտալիզմի ժամանակ։

Մենք պիտի տարբերենք մրցության յերկու տեսակ. մրցություն, վոր տեղի յե ունենում մոնոպոլիստական կապիտալիզմի ժամանակ դեռ իրենց գոյությունը շարունակող միջմոնոպոլիստական տարրերի և մոնոպոլիաների միջև, և մրցություն, վոր տեղի յե ունենում մոնոպոլիստական կազմակերպությունների միջև:

Առաջին տեսակի մրցության են վերաբերում բոլոր մանր ապրանքարտադրողների, կամ ինչպես Մարքսն և նրանց անվանում, քաղաքի և գյուղի «անկախ ապրանքարտադրողների» հետ տեղի ունեցող մրցությունը:

Մրցության նույն տեսակի չերկրորդ խմբին են վերաբերում «առևտսեղերների» (այսինքն կապիտալիստական միավորումներից դուրս մնացած ձեռնարկությունների) և մոնոպոլիաների միջև տեղի ունեցող մրցությունը: Բացարձակ, արտադրությունը 100 տոկոսով ընդգրկող, մոնոպոլիաները մինչև այժմ շատ հազվագյուտ բացառություն են կազմում:

Բայց նույնիսկ չեթե չենթադրենք, վոր պետական սահմանների շրջանակում մոնոպոլիաներ կազմվելու պրոցեսը միանգամայն ավարտվել է, այդ դեռ չի նշանակում, թե մրցությունը վերացել է:

Որինակ, մոնոպոլիաների ներսում ու դրանց միջև գոյություն ունեն մրցության հետևյալ գլխավոր ձևերը.

1. Այն դեպքերում, յիբր մոնոպոլիաներ կազմվելը դեռ չի հասել լրիվ ձուլման աստիճանին, այսինքն շահույթի բաշխման գործում առտնձին ձեռնարկությունների ինքնուրույնությունը դեռ միանգամայն չի

վոչնչացել, մշտական պաշքար և տեղի ունենում կարտեկի ներսում՝ պաշքար արտադրական քվտոների (բաժինների) համար, ձեռնարկության արտադրական ընդլայնման համար՝ վաճառահանման հնարավորություններից անկախ, ընդհանուր վաճառահանման մեջ ավելի բաժին ստանալու և մրցունակությունը ուժեղացնելու համար՝ կարտեկի լիկվիդացիայի դեպքում: Վորովհետև տարբեր յերկրների, վորպես առանձին ամբողջական միավորների, շահերի հակասության հետևանքով, համարյա յերբեք միջազգային մասշտաբով միջազգային կարտեկում միավորվող ձեռնարկությունները լրիվ չափով չեն ձուլվում, դրա համար ել միջազգային, հորիզոնական մոնոպոլիաների ներսում տեղի ունեցող մրցության այս ձևը հսկայական նշանակություն ունի:

2. Իսկ այն դեպքերում, յերբ մոնոպոլիաներ կազմրվեն արդեն լրիվ ձուլման աստիճանի յե հասել, միավորության ներսի այդ մրցությունը վերանում է: Այդ սակայն, վսչ մի դեպքում չի նշանակում, թե մրցությունը դադարել է ընդհանրապես: Առաջ են գալիս մրցության նոր ձևեր:

ա) Սպառողական միենույն պահանջը կարող և տարբեր ապրանքներով բավարարվել: Այսպես, որինտեկ, վատելիք կարող և հանդիսանալ քարածուխը, նավթը, փայտը, տորֆը, կառուցումները կարելի է անել պողպատից, աղյուսից, ցեմենտից կամ փայտից. ճանապարհորդել կարելի յե յերկաթուղով, ավտոմոբիլով, ոդանավով և ալլն: Իրա համար ել ապրանքների վորոշ տեսակի վերաբերմամբ լրիվ մոնոպոլիա հաստատվելը դեռ վսչ մի դեպքում հնարավորություն չի տա

լիս մոնոպոլիային, վոր նա իր հայեցողությամբ գներ նշանակի: Դրանով մրցությունը չի վերանում, քանի վոր նույնիսկ լրիվ մոնոպոլիայի դեպքում յուրաքանչյուր առանձին ձուլում մրցությունը շարունակում է իր գոյութիւնը տարբեր այնպիսի սպրանքներ արտադրողներէ միջև, վորոնք կարող են միեւնոյն սպառողական նպատակներին ծառայել:

բ) Քանի վոր կապիտալիստական հասարակակարգում լայն խաւերի գնողական ունակությունը հասարակութեան արտադրական ունակութիւնից յետ և մնում, դրա համար ել նաև այն դեպքում, յերբ սպրանքների բոլոր տեսակների արտադրութիւնն ու վաճառքը կենտրոնացված են մոնոպոլիաների ձեռքում, մրցութիւնը դարձյալ շարունակում է իր գոյութիւնը, դարձյալ ձգտում է շուկայում ավելի մեծ բաժին նվաճել սպրանքի տվյալ տեսակի համար:

«Սպառողի համար մղվող» այս պայքարն իր ամենաբարձր զարգացման վիճակում կարելի չէ դիտել Միացյալ Նահանգներում, ուր մոնոպոլիաներ կազմվելն ամենից ավելի չէ առաջ գնացել: Ամերիկյան ավտոմոբիլային գործարանները հայտարարում են, վոր յուրաքանչյուր ամերիկացի պիտի իր ավտոմոբիլն ունենա, մինչդեռ միեւնոյն ժամանակ շինարարական արդունաբերութիւնն աշխատում է սպառողի պահանջն ուղղել դեպի բնակարանների բարելավումը, պտուղներ ու մրգեր արտադրողներն ագիտացիա յեն մղում իրենց արտադրանքի պահանջն ավելացնելու համար և այլն: Հասկանալի չէ, նրանք բոլորն ազդում են սպառողի վրա վնչ միայն ռեկլամով, այլ և գների իջեցմամբ:

այդ նշանակում ե, վոր մրցությունը շարունակվում ե,
չնայած մոնոպոլիաների գոյության:

բ) Յեթե նոր, գոյություն ունեցող մոնոպոլիա-
ների դեմ մրցող ձեռնարկությունների ստեղծումը
գծվարացել ե՝ բանկային և արդյունաբերական կապի-
տալը ֆինանսական կապիտալի մեջ միավորվելու շնոր-
հիվ, — քանի վոր բազմաթիվ ճյուղերում նոր մրցունակ
ձեռնարկություն ստեղծելու համար անհրաժեշտ կապի-
տալն առանց բանկերի ոգնության հավաքելը չափա-
դանց գծվարացել ե, — բայց և այնպես մենք տեսնում
ենք, վոր մոնոպոլիստական կազմակերպություններն
իրենք մրցակից ձեռնարկություններ են ստեղծում այլ
մոնոպոլիաներին պատկանող բնագավառներում: Այդպի-
սին ե, որինակ, գերմանական յերկաթագործական ար-
դյունաբերության հեղուկ ածխի և ազոտի արտա-
դրությունը, կամ ել «Ի. Գ.» (ներկի կոնցերն) խուժու-
մը մետալուրգիայի բնագավառը և այլն:

Չնայած այն հանգամանքին, վոր ժամանակակից
կապիտալիզմը մոնոպոլիաների զարգացման բարձր սու-
տիճանի յե հասել, սակայն մրցության վերացման մա-
սին խոսք անգամ չի կարող լինել: Յեթե նույնիսկ
մոնոպոլիաներն ամբողջովին արտադրության բոլոր
տեսակներին տիրանային, նրանք իրար հետ մրցության
սլայքարի վիճակում կգտնվեյին: Նրանք պետք ե աշ-
խատեյին, վոր վորոշ պահանջ բավարարվեր իրենց ապ-
րանքով և վուչ թե այլ մոնոպոլիայի կողմից արտա-
դրված ուրիշ ապրանքներով փոխարինվեր: Նրանք
պետք ե ձգտեյին, վոր սպառողն իր լեկամուտը ծախ-
սելու ձևերն ընտրելիս կանգ առներ հատկապես իրենց
ապրանքը գնելու վրա:

Այդպիսով մենք տեսնում ենք, ինչպես այդ—
Բուխարինից տարբերվելով—ճիշտ կերպով ընդգծել է
Լենինը, Վոր մոնոպոլիան վոչ մի դեպքում չի վոչնչաց-
նում մրցությունը: Լենինը գրում է.

«Յեւ վ միևնույն ժամանակ մոնոպոլիաները,
ազատ մրցությունից աճելով, չեն վերացնում այն,
այլ գոյություն են պահպանում դրանից վերև ու
դրա հետ միասին՝ դրանով մի շարք սուր ու խո-
շոր հակասություններ, շփումներ, ընդհարում-
ներ առաջ բերելով» («Իմպերիալիզմը վորպես կա-
պիտալիզմի բարձրագույն ստադիան», հ. XIX,
յեր. 142):

2. ՄՈՆՈՊՈԼԻԱՆԵՐ ԿԱԶՄՎԵԼՆ ՈՒ ՊԼԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Սոցիալ-դեմոկրատները կարծում են, Վոր «կազ-
մակերպված կապիտալիզմի» տարբերի զարգացման հետ
կապված է արտադրության անարխիայի հաղթահա-
րումը, «ազատ մրցության կապիտալիստական սկզբուն-
քի փոխարինումը պլանային արտադրության սոցիա-
լիստական սկզբունքով», քանի Վոր «կազմակերպված
կապիտալիզմի» պայմաներում արտադրությունը կեն-
տրոնացված է մի ձեռքում և դրա համարել իրր թե կա-
րելի կլինի արտադրությունը և պահանջն իրար համա-
պատասխան դարձնել: Սակայն յեթե անգամ դա հնա-
րավոր լիներ, դա դեռ բոլորովին պլանային տնտե-
սության նշանակություն չեր ունենա, այլ արտադրու-
թյունը անարխիկ պահանջին միակողմանիորեն միայն
հնարմարվեր: Մինչդեռ պլանային տնտեսությունը ար-

տադրութիւնն ու սպառումը փոխադարձաբար համապատասխան ե դարձնում իրար:

Դրանից բղխում ե, վոր մոնոպոլիստական կապիտալիզմի ժամանակաշրջանում չի կարելի կրիդիտներից խուսափել: Դա վորոշակի ընդգծել ե Լենինը.

«Թե կրիդիտները կվերացվեն կարտելների կողմից, դա բուրժուական տնտեսագետների հեքիաթն ե... Ընդհակառակը, արդյունաբերության մի քանի ճյուղերում ստեղծվող մոնոպոլիան ուժեղացնում ե սրում ե այն քառսային վիճակը, վոր հատուկ ե ամբողջ կապիտալիստական արտադրութեանն ընդհանուր առմամբ («Իմպերիալիզմը վորպես կապիտալիզմի բարձրագույն ստադիան», հ. XIX, յեր. 92):

Իսկապես, բավական ե հայացք գցել ամբողջ ամերիկյան արդյունաբերութեան, կամ ել վերջինիս մոնոպոլիացված առանձին ճյուղերի արտադրութեան կորզժի վրա, ե իսկույն պարզ կլինի, վոր խոսք չի կարող լինել արտադրութեան պլանաչափ ընթացքի, կրիդիտների վերացման մասին: Որինակ բերենք. Միացյալ Նահանգների յերկաթագործական ե պողպատածուլական համարյա ամբողջովին մոնոպոլացված արդյունաբերութեան միջ պողպատի արտադրութիւնը հետեյալ պատկերն ե ունեցել.

Միլիոն տոններով

1920—42,8

1925—46,1

1921—20,1

1926—49,0

1922—36,2

1927—45,0

1923—45,7

1928—50,0

1924—38,5

1929—55,5 (ոբիեկտիբ):

Մենք տեսնում ենք, վոր պլանայնութեան հետ-

քըն անգամ չկա այստեղ: Իզուր չե կենինը խոսում
«քառասյին վիճակի աճման» մասին՝ մոնոպոլիաներ
կազմվելու պրոցեսսում:

Մի այլ որինակ:—Պղնձի գներն այս տարի, չնա-
յած ինտերնացիոնալ կարտելի գոյության, մինչև 500/0
տատանման յենթարկվեցին:

Սակայն մոնոպոլիաների առավել առաջ գնացող,
ամբողջ կապիտալիստական տնտեսութունն ընդգրկող
զարգացումն իսկ չեր տանի նոր, կրիդիաներից զերծ
տնտեսության հաստատմանը: Տնտեսության ալգալիսի
ընդգրկումը մոնոպոլիաների կողմից՝ վիճակագրության
լայնածավալ դրվածքի հետ միասին՝ կարող եր վերաց-
նել արտադրության առանձին ճյուղերի դիսպրոպորցի
ան միայն, բայց վոչ մի դեպքում չեր վերացնի այն
հակասությունները, վոր բաշխման անտադոնիստական
պայմաններում գոյություն ունեն սպառողական սահ-
մանափակ ունակության և հասարակության արտա-
դրական ունակության միջև: Տեսնենք, ինչ ե ասում
Մարքսը այստեղ, ուր նա առավել վառ կերպով ձևա-
կերպում ե իր հալացքը կրիդիաների պատճառների վե-
րաբերմամբ:—

«Անմիջական շահագործման պայմաններն ու
դրա իրացման պայմանները նույնը չեն: Նրանք
չեն գուդադիպում վոչ միայն ըստ ժամանակի և
տեղի, այլ և ըստ գաղափարի: Առաջինները սահ-
մանափակված են հասարակության արտադրական
ունակությամբ միայն, չերկրորդները՝ արտադրու-
թյան տարբեր ճյուղերի համեմատականությամբ
և հասարակության սպառողական ունակությամբ:
Բայց այս վերջինը վորոշվում ե վոչ արտադրա-

կան բացարձակ ունակությամբ և վճռել սպառողական բացարձակ ունակությամբ, այլ այն սպառողական ունակությամբ՝ բաշխման անտագոնիստական հարաբերությունների հիմունքով, վորոնք հասարակության հսկայական խավերի սպառումը միմյանմով, սովելի կամ պակաս նեղ սահմաններում փոփոխվող չափերի յին հասցնում: Սպառողական ունակությունն ալոուհետև սահմանափակված է կուտակման ձգտումով, կապիտալ ավելացնելու և ընդլայնված մասշտաբով հավելյալ արժեք արտադրելու ձգտումով: Սլդպես է կապիտալիստական արտադրության որևեքը, վոր թելադրվում է արտադրության մեթոդների մշտական հեղափոխություններով, ունեցած կապիտալի ապարժեքացմամբ, վոր շարունակ ուղեկցում են ալդալիսի հեղաշրջումներին, ընդհանուր մրցության պայքարով, արտադրությունը կատարելագործելու և նրա մասշտաբն ընդլայնելու անհրաժեշտությամբ, ի սեր արտադրության պահպանման միայն ու կորստի սպառնալիքի տակ, („Капитал“, т III, ч I, стр. 225)

Պարզ է, վոր մոնոպոլիաներ կազմվելը վճռելի դեպքում չիկարող վերացնել մասսաների չքավորությունն ու սպառողական սահմանափակ ունակությունը կապիտալիստական արտադրության տենդենցի համեմատությամբ՝ զարգացնել արտադրական ուժերն այնպիսի ինտենսիվությամբ, վորպես թե դրանց սահմանը հասարակության բացարձակ սպառողական ունակությունն է հանդիսանում, մի հանգամանք, վոր բոլոր ճշմարիտ կրիզիսների վերջնական պատճառն է հանդի-

անում» («Капитал», т. III, ч. II, стр.22): Ընդհակառակը, հակառակն մոնոպոլիաները, վորոնք իրենց են հալատակեցնում պետական ապարատը, բուրժուազիայի համար ավելի շուտ միջոց է հանդիսանում, վոր նա պակասեցնի արտադրած պրոդուկտից բանվորների ստանալիք բաժինը, ավելացնի շահագործման նորման, բայց և դրանով հենց սրի «բոլոր ճշմարիտ կրիզիսների վերջնական պատճառների» ազդեցությունը:

3. «ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԿԱՊԻՏԱԼԻԶՄ» ՅԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄ

«Կազմակերպված կապիտալիզմի» թեորիայի հետ սերտ կապված է պետական կապիտալիզմի գաղափարը: Պետության տնտեսական նշանակությունը ավելի ու ավելի աճում է: Այդ տեսակ գարգացման հիմքը արտադրության հանրայնացման ձգտումն է, վոր հատկանշական է կապիտալիզմի համար: Լենինն այդ մասին հետևյալն է ասում.

«Կապիտալիզմն իր իմպերիալիստական ստադիայում ընդհուպ մոտենում է արտադրության ամենաբազմակողմանի հանրայնացման, նա կապիտալիստներին, այսպես ասած, ներս է քաշում, հակառակ նրանց կամքին ու գիտակցության, մի ինչ-վոր նոր հասարակակարգ, վոր մրցության լիակատար ազատությունից դեպի լիակատար հանրայնացման անցումն է հանդիսանում: Արտադրությունը հասարակական է դառնում, իսկ յուրացումը մասնավոր է մնում: Արտադրության հասարակական միջոցները մնում են վորպես փոք-

րաթիվ անձերի մասնավոր սեփականութիւնն»:
(«Իմպերիալիզմը վորպես կապիտալիզմի բար-
ձրագույն ստադիան»):

Պետական կապիտալիզմն ելապես ձգտում է վոր-
ևս կերպ հաղթահարել այն հակասութիւնը, վոր կա
հանրայնացված արտադրութեան և մասնավոր յուրաց-
ման միջև:

Պետական կապիտալիզմը միաժամանակ ձգտում է
պաշտպանել բուրժուազիայի, վորպես դասակարգի, կամ
եւ դրա ավելի ազդեցիկ խավերի ընդհանուր շահերըս
այն առանձին կապիտալիստների կամ դրանց առան-
ձին խմբակցութիւնների մասնավոր շահերի ձեռնա-
մխութիւններից, վորոնք միայն մի նպատակի յեն
հետապնդում՝ ըստ կարելոյն ավելի բարձր շահույթ
ստանալ:

Վորքան ավելի խիստ են լերեան դալիս կապի-
տալիզմի հիմնական հակասութիւնները, վորքան ավե-
լի պակաս չափով կապիտալիզմի ներքին մեխանիզմն
իվիճակի յե լինում այդ հակասութիւնները պարբե-
րաբար հաղթահարել, այնքան ավելի ու ավելի ան-
հետնում է այսպես կոչված laissez faire*) քաղաքա-
կանութիւնն ու իդեոլոգիան, և պետութիւնը վճռա-
կանորեն հրապարակ է դալիս առաջաբնում վորպես
տնտեսութեան ռեգուլատոր: (Պետութեան հետ միապին
նման ֆունկցիաներով ասպարեզ են դալիս շրջանները,
քաղաքները, համայնքները, վորով և բացատրվում է
գերմանական «Gemeinwirtschaft»-ընդհանուր տնտե-
սութիւն տերմինը): Ահա ինչու պետութեան կարգա-
վորող գործունեյութիւնը ամենից ուժեղ եւ այսպես

*) Չմիջամտել:



կոչված «ռազմական սոցիալիզմի» ժամանակ՝ Գերմանիայում:

Պետութւյան ռեզուլյատիւ վործունեւութիւնը փոփոխուեալ է պետական ապարատի ռեզուլյամբ իշխող բուրժուազիայի ընդլթի հետ միասին: Յերկար ժամանակվա ընթացքում, քանի դեռ չկազմակերպված բուրժուազիայի տեսակարար կշիռը բարձր եր նորնոր սկսվող մոնոպոլիաների կշիռը, պետութւյնը փորձում եր մոնոպոլիաներ կազմելու պրոցեսսը խափանել կարտելների դեմ ուղղված որենքներ հրատարակելով: Ներկայումս այդ քաղաքականութւնից թուլլ իրեւոյդիական արձագանգներ են միայն մնացել: Իսկ փաստորեն պետութւյնն այժմ կառավարում են մոնոպոլիաները: Պետութւյնն իր արտաքին տնտեսական քաղաքականութիւնը (մաքսային տարիֆներ, առևտրական դաշնագրեր, գաղութային քաղաքականութիւն, պատերազմներ) վարում է մոնոպոլիաների թելադրանքով: Յեթե մոնոպոլիատական կազմակերպութիւնների շահերն ընդհարվում են, հաղթում է ավելի ուժեղ կողմը: Բոլորին հախտի յե, որինակ, վոր Ֆրանս-գերմանական առևտրական դաշնագիրը կարող է կնքվել միայն այն բանից հետո, յերբ գերմանական և Ֆրանսական յերկաթագործ և պողպատի կարտելները համաձայնութիւյան գան: Ապա, գերման-յապոնական առևտրական դաշնագրում անդրադարձալ գերմանական ներկի կոնցերնի և յապոնական կառավարութիւյան միջև կնքված մասնավոր պայմանագիրը և այլն: Պետութւյնը, վոր մեծ դեր է խաղում նուէյակս վորպես այն ձեռնարկութիւնների սեփականատեր, վորոնք կապիտալիստական սկզբունքներով են կազմակերպված,

ինքը հենց այդ ձեռնարկութիւններով մտնում ե համապատասխան կարտելի մեջ (որինակ՝ մասնակցութիւն գերմանական կալիւյի կարտելի մեջ, անգլո-պարսկական նավթային ընկերութիւնը և այլն):

Ներքին քաղաքականութեան ասպարեզում հաճախ պետութիւնը յերևան ե գալիս վորպես բուրժուազիայի դասակարգային շահերի պաշտպան՝ ընդդեմ շահութեանն ավելացնելու այն ձգտումների, վոր ցույց են տալիս առանձին կապիտալիստները: Դա այն չափով ցավալին ե ընդունվում առանձին կապիտալիստների կողմից, վորքան ավելի յե բուրժուազիան վստահացած իր դասակարգային տիրապետութեան վրա: Այստեղից սկիզբ ե առնում բուրժուազիայի յերկակի վերաբերմունքը դեպի պետական կապիտալիզմը: Այդպես, Գոլդշմիդտը, վոր ներկայումս գերմանական ֆինանսական կապիտալի դադափարական ղեկավարն ե հանդիսանում, գրում ե Դարմշտադտի բանկի հաշվետվութեան մեջ.

«Պետութիւնը վորպես բարձրագույն հեղինակավոր ինստանցիա չպետք ե թողներ իր ոքայեկտիւլ պոստը, վորի բարձունքից նա պետք ե հետեի դեպքերի ամբողջ ընթացքին: Մինչդեռ պետութիւնն ավելի ու ավելի յե սկսել խառնվել զարգացման այս բնական պրոցեսին և ավելի ու ավելի վճռական գործոն ե հանդիսանում մեր տնտեսական կյանքում: Նա վորոշում ե բնակարանային վարձի չափերը, ղեկավարում ե բնակարանային շինարարութիւնը, թելադրում ե յերկաթի, քարածխի, կալիւյի գները, ինքը հենց հսկայական չափերի ձեռնարկութիւններ ե վարում, ավելի ու ավելի աճող չափերով մասնակ-

ցում ե բանկային ու վարկային գործին, հարկեր
ե գանձում վճի միայն յեկամտից, այլ և հենց
կապիտալից, ու մի կենտրոնից, վորպես զիկ-
տատոր, թելադրում ե աշխատավարձի չափերն
ու բանվորական որվա տեղությունը»:

4. «ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԿԱՊԻՏԱԼԻԶՄ», ՍՈՑԻԱԼԱ- ԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱ

«Կազմակերպված կապիտալիզմի» թեորիայի հետ
սերտ կապված են «սոցիալական պետության» և «տըն-
տեսական դեմոկրատիայի» թեորիաները: Ռեֆորմիստ-
ները, ինչպես հայտնի յե, պնդում են, վոր ժամանա-
կակից պետությունը վճի թե բուրժուազիայի զիկտա-
տուրալի գործիքն և հանդիսանում, այլ՝ «վերդասա-
կարգային» սոցիալական պետություն ե: Այդ առթիվ
նրանք մատնանիշ են լինում ամենից առաջ սո-
ցիալական ապահովության շրջանում բուրժուական
պետության ձեռնարկումների վրա: Այդպես, գերմանա-
կան հայտնի սոցիալ-դեմոկրատ Լեբեն գրում ե հե-
տևյալը*):

«Պետությունը,—հասկանալի յե, միշտ վորոշ
սահմաններում միայն,—հոգում ե հղի մոր և նո-
րածին յերեխայի մասին. նա վճի միայն դեռա-
հաս սերնդին դպրոցներ հաճախել և ստիպում,
այլ և ստուգում ե նրանց առողջությունը, խրա-
խուսում ե նրանց ֆիզիկական վարժություններն

*) Ցիտատը բերված ե ըստ Լապիմսկու «Սոցիալական
պետություն» հոգվածի. գերմանական «Մարքսիզմի դրոշի տակ»
ամսագրում, յերկրորդ տարի, չորրորդ գիրք:

բը ու նրանց խաղերը: Նա իր վրա յե վերցնում նրանց պրոֆեսիոնալ դաստիարակության մի մասը՝ վոչ միայն նրանց վորպես ապագա պաշտոնյաներ և գիտնականներ, այլ և վորպես արհեստավորներ, գլուղացիներ ու բանվորներ՝ նախապատրաստելու գործում: Նա կարգավորում և հիվանդների, հաշմանդամների, դժբախտ պատահարներից տուժածների, ծերերի ապահովագրումը, նա վորոշ սահմաններում ապահովում և գործազուրկներին: Նա միջամտում և աշխատավարձի կոնֆլիկտներին, միջնորդում և կողմերի միջև, ստիպում և նրանց աշխատանքի վերադառնալ կամ գործաբանները բանալ: Նա իր վրա յե վերցնում պատերազմի ժամանակ միլիտնավոր տուժածների հոգսը, փախստաշաններին և աքսորյալներին հասած վնասների հատուցումը: Որորոցից մինչև գերեզման պետության ձեռքը միջամտում և ինչպես մասնավոր անձերի, նույնպես և բնակչության ամբողջ խմբակցությունների գործերին աջակիսի չափերով, վորպիսին առաջներում յերբեք չի չնդել:

Ռեֆորմիստները խաբում են բանվորական մասսաներին, պետության գործունեյությունը սոցիալական ապահովության շրջանում համարելով վորպես մի հոգս, վոր «դասակարգերից վերև կանգնած» պետությունը քաշում և աշխատավորների վերաբերմամբ: Իսկ փաստորեն կապիտալիստական պետության սոցիալական ամբողջ քաղաքականությունը բուրժուազիայի շահերին և ծառայում: Նա ծառայում և դրանց յիրեք ուղղությամբ:

1) Նա փորձում և արգելք հանդիսանալ, վոր ա-

ռանձին կապիտալիստները բանվոր դատակարգին անսահման շահագործման չենթարկեն, վորի հետևանքը կլինե՛ր այն, վոր բանվորներն իրենց աշխատունակութիւնը ժամանակից առաջ կկորցնեյին, բանվոր դատակարգը, ընդհանուր առմամբ կապիտալի վերարտադրման պրոցեսսի համար այդ անհրաժեշտ հիմքը, կաշկաւները եւ կվոչնչանա՛ր (դրան են վերաբերում չեքեխաների աշխատանքի, կանանց գիշերային աշխատանքի արգելումը, բանվորական ժամերի սահմանափակումը եւ այլն)։

2) Նպաստների (գործազուրկների, հիվանդների եւ ուրիշների համար) ոգնութեամբ նա փորձում ե թուլացնել փողոց նետված ե շահագործվող մասսաների վրդովմունքն ընդդեմ կապիտալիստական հոսարակակարգի։ Այդ իմաստով սոցիալական քաղաքականութիւնն ոգնում ե բուրժուազիայի դատակարգային տիրապետութեան պահպանմանը։ Դա պարզ ու վորոշակի արտահայտել ե գերմանական բուրժուազիայի իդեոլոգներից մեկը, Բոննը, իր ռացիոնալիզացիայի խնդրին նվիրված գրքում։

«Ռացիոնալիզացիայի արդշունք պիտի լինի այն վորոշ ալիքուկ յեկամուտը, վորը պետք եր հատկացնել գործազուրկներին ոգնելու նպատակին, քանի վոր ժամանակակից ժողովրդատնտեսութեան մեջ չի կարելի միլլիոնավոր գործազուրկներին առանց աշխատելութեան անգիտանալ։ Ժամանակակից կազմակերպված մասսաները լուռ կերպով սովամահ չեն լինում։ Անհրաժեշտ ե սոցիալական ձեռնարկումների ոգնութեամբ կամ կանխել սոցիալական կատաստրոֆները, կամ արգելքներ դնել դրանց առաջ»։

Պատժականութիւնն չի, վոր այն չեղիւններում
և այն ժամանակաշրջաններում, յերբ բուրժուազիային
դեռ հաջողվում է իր գերշահույթներով կաշառել բանվոր-
ական արխտոկրատիայի բաւական լալն շրջաններին իր
դասակարգային տիրապետութիւնն ամրադնդելու հա-
մար, ալգպիսի չեղիւններում ու ժամանակաշրջաններում
չի յեղել զործադրելության ապահովագրութիւնն և այլն,
ինչպէս այդ չէա Միացյալ Նահանգներում մինչև այ-
սոր ել:

3) Այն, ինչ վոր հրամցվում է սոցիալական քա-
ղաքականութեան ձևով, դրա վորոշ մասը (որինակ,
կոնֆլիկտների պարտագիր արբիաբաժ քննութիւնն) բան-
վորների շահերին ուղղակի թշնամական քաղաքականու-
թիւնն և հանդիսանում:—Պետութիւնը վորպէս դիկ-
տատոր և հանդէս գալիս կապիտալիստների շահերը
պաշտպանելու համար, վորպէսդ խանդարի պրոլետա-
րիատին իր պահանջները զործադուլների միջոցով
պաշտպանել: Դա իրենից ներկայացնում է ֆաշիզա-
ցիայի տարր:

4) Վերջապէս սոցիալական ապահովութեան ամ-
բողջ ապաւարտումն ռեֆորմիստներին լավ վարձա-
տրվող պաշտոններ հատկացնելը ռեֆորմիստների կադ-
րերին անձնապէս կաշառելու գործին և ծառայում-
այդ նշանակում է, վոր պետական ապաւարատն աջա-
կցվում է ռեֆորմիստական վերնախավի հետ և հեղա-
փոխական շարժման դեմ պայքարելու եյական ձեերից
մեկն և հանդիսանում:

Պետական կապիտալիզմի սոցիալ-դեմոկրատա-
կան թեորիաների բնագավառին և պատկանում նաև
այսպէս կոչված «տնտեսական դեմոկրատիայի» թե-
որիան:

«Տնտեսական դեմոկրատիան,— հայտնի արեց Հիլ-Ֆերդինանդը Բիլում, սոցիալ-դեմոկրատների 1927 թվի համագումարում, — դա տնտեսական մասնավոր շահերի յենթարկումն է հասարակության շահերին»:

Մինչդեռ, ինչպես մենք տեսանք, փաստորեն պետական կապիտալիզմը մասամբ առանձին կապիտալիստի տնտեսական մասնավոր շահերի յենթարկումն է հանդիսանում բուրժուազիայի ընդհանուր շահերին, վորոնք և վորպես «հասարակական շահեր» են հրամցվում: Ռեֆորմիստների խաբեբայությունը յերևան է գալիս նաև արտահայտած այն «համոզմունքի» մեջ, իբր թե կապիտալիստական պետության համար կան նաև ինչ-վոր այլ ընդհանուր շահեր, բացի բուն բուրժուազիայի, վորպես դասակարգի, շահերից: Պետության մասնակցությունը մոնոպոլ կազմակերպությունների կառավարմանը՝ կապիտալիստներից, բանվորներից և սպառողներից բաղկացած պետական հսկիչ խորհուրդներ նշանակելու միջոցով, տնտեսական քաղաքականության վրա ազդելը՝ կառավարության մեջ սոցիալիստական կուտակցությունների մասնակցության միջոցով, «տնտեսական դեմոկրատիան»՝ պրոֆմիտությունների և ձեռնարկություններում գոյություն ունեցող խորհուրդների ձևով, բանվորների մասնակցությունը կապիտալիստների շահույթներին՝ այսպես ասած «շահույթներին մասնակցելու», բանվորական փայերի և այլ ձևերով, կապիտալի դուրս քշումը՝ բանվոր դասակարգի խնայողությունները կոոպերատիվներում, բանվորական արտադրական ձեռնարկություններում կուտակելու միջոցով և այլն,— այդ բոլորը սոցիալ-դեմոկրատների կարծիքով «տնտեսական դեմոկրատ

տիան» իրազործելու միջոց են հանդիսանում: Ըստ ինքյան հասկանալի չե, վոր քանի դեռ կանգուն ե բուրժուազիայի իշխանությունը, խոսք անգամ չի կարող լինել այն մասին, թե բանվորները կազդեն կապիտալիստական տնտեսության վրա: «Տնտեսական դեմոկրատիայի» թեորիան ճիշտ այնպես, ինչպես և բրանդերականների թեորիան «արտադրության կոնտրոլի մասին», անմիջական հեղափոխական սխուտացիայի պայմաններում ծառայում են միայն բանվորների հեղափոխական պայքարի դեմ պատվարներ ստեղծելու գործին:

5. «ԿԱԶՄԱԿԵՐՊԱՍԾ ԿԱՊԻՏԱԼԻԶՄ» ՅԵՎ ԳԵՐԻՄՊԵՐԻԱԼԻԶՄ

Ժամանակակից կապիտալիզմի բնույթի վերաբերմամբ յերեք հիմնական հայացքներ կան՝ Լենինի, Բուխարինի և սոցիալ-դեմոկրատների:

Լենինի պնդումը, կարճ ձևով արտահայտած, սուտ ե.—մոնոպոլիաները չեն վնչնչացնում մրցութունները, ճնշեսուքյան մեջ պլանայնություն չեն մտցնում, կրիգիսմներ չեն վերացնում: Նրանք սրում են ներքին և արտաքին հակասությունները և տանում են դեպի բուրժուազիայի խորտակումը՝ արտաքին պատերազմների կապակցութամբ կամ ել դրանցից անկախ՝ դեպի մի խորտակում, վորը պետք ե անհամեմատ ավելի վաղ տեղի ունենա, քան առանձին ազգային ֆինանսական կապիտալների համաշխարհային միություն կազմելու ուղղված զարգացումը կկարողանա իր նպատակին հասնել: Մոնոպոլիստական կապիտալիզմն իր մեջ

փտութեան զգալի տարրեր և պարունակում և վոչ մի ղեպքում չի հանդիսանում կապիտալիզմի «լավագուշն ձևը աչն իմաստով, ինչպես հասկանում են ալգ «կազմակերպված կապիտալիզմի» ռեֆորմիստական պաշտպանները: Բայց նա «բարձրագուշն ձևն» և հանդիսանում աչն իմաստով, վոր նրանում հասունանում են իր անկման բոլոր նախադրյալները, և պրոլետարական հեղափոխությունը դառնում և որվա ակտուալ խնդիր:

Բուխարինի պնդումն ասում և.— մոնոպոլիաները վոչնչացնում են մրցությունը պետութեան տնտեսական տերրիտորիայի ներսում և ներքին տնտեսութեան մեջ պլանայնություն են մտցնում*): Նրանք մեղմացնում են կապիտալիզմի հակասությունները պետութեան տնտեսական տերրիտորիայի ներսում, բայց չափազանց սրում են արտաքին հակասությունները, վաճառահանման շուկաների և գաղութների համար մղվող պայքարը, նրանք անխուսափելիորեն տանում են դեպի նոր պատերազմներ, վորոնք քաղաքացիական կռիւների վերածվելով խորտակում, վոչնչացնում են կապիտալիզմը:

Սոցիալ-դեմոկրատների պնդումը.— «կազմակերպված կապիտալիզմի» մեջ մրցությունը վոչնչանում և, տնտեսությունը պլանային հիմունքով և վարվում, կրիզիսները վերանում են: «կազմակերպված կապիտալիզմը» կապիտալիզմի նոր լավագուշն ձևն և հանդիսանում, դա նրան նոր յերկարատե վերելք և խոս-

*) «Պետական կապիտալիզմը իր ավարտված ձևով նշանակում և կոնկուրենցիայի վոչնչացում կապիտալիստական յերկրի ցեղատու և մրցման մեծագուշն սրումն կապիտալիստական յերկրների միջեւ (Բուխարին, «Правда», 1929 թ. 26 մայիսի):

տաճանում: Պետութիւնը սոցիալական պետութիւն է դառնում: Դեմոկրատիայի հողի վրա բանվոր դասակարգը ազդեցութիւն է ձեռք բերում պետութեան վերաբերմամբ իր քաղաքական կուսակցութիւնների միջոցով (կամ մենակ ռեֆորմիստների, կամ եւ բուրժուական կուսակցութիւնների հետ՝ կառավարութեան մեջ կապիցիա կազմած): Բանվոր դասակարգն ազդեցութիւն է ձեռք բերում նաեւ «տնտեսական դեմոկրատիան» իրականացնելու խնդրում: Կապիտալի միջազային միացումները (կարտելներ, տրեստներ և այլն) մեղմացնում են պետական հակասութիւնները և տնտեսական բազա չեն ստեղծում «գերիմպերիալիզմի» համար, վորի վերաբնական որդանը Ազգերի Լիգան է հանդիսանում:

Վերեւում բերած մեր դատողութիւններից արդեն պարզ յերևում է, վոր ընկ. Բուխարինի տեսակետը ճիշտ չի ու նրա հայացքը մի շարք ընդհանուր տարրեր ունի ռեֆորմիստների թեորիայի հետ:

Ընկ. Բուխարինի տեսակետն առանձին յերկրներում կապիտալիզմի ներքին հակասութիւնների վերացման մասին ճիշտ չէ, վորովհետեւ թեպետ և մոնոպոլիաներ կազմվելով իրար դեմ պայքարող կապիտալիստական առանձին ձեռնարկութիւնների թիվը նվազում է (ուրեմն և մրցող տնտեսական տարրերի թիվը պակասում է), բայց մյուս կողմից սրվում է մրցութիւնը շահույթի մոնոպոլ նորման իրացնող մոնոպոլիստական ձեռնարկութիւնների և ավելի մանր չկազմակերպված կապիտալիստների հակայական մասսայի միջև, վորոնց շահույթները մոնոպոլիաների ճնշման տակ ընդհանուր առմամբ այդ նորմայից ցած են

իջնում: Այնուհետև հասարակության սպառողական ունակության և ռացիոնալացված մոնոպոլիստական ձևունարկություններն արտադրական հնարավորությունների միջև յեղած հակասությունները, հասարակական արտադրության և վաճառահանման միջև յեղած հակասությունը, հասարակական արտադրության և մասնավոր յուրացման միջև յեղած հակասությունը, — այդ բոլոր հակասություններն անխուսափելի կերպով և անընդհատ աճում են: Դրա հետևանքով բանվոր դասակարգի ամբողջ մասսայի և մոնոպոլիստական բուրժուազիայի միջև յեղած հակասությունն էլ ավելի յե սրվում և կարող է, առանց արտաքին պատերազմների, առաջ բերել սուր հեղափոխական սխուռացիա և բուրժուազիայի խորտակում:

Լեֆուրմիստները «կազմակերպված կապիտալիզմի» թեորիայի վրա կառուցում են գերիմպերիալիզմի թեորիան: Նրանք ընդունում են, Վոր կապիտալի միջադպպին սիացումների շնորհիվ վերանում են իմպերիալիստական պատերազմների տնտեսական պատճառները: Խաղաղության համար վտանգավոր կարող են լինել այն պետական կազմավորումները, վորոնք չեն ցանկանում «կազմակերպված կապիտալիզմի» ազդեցության շրջանի մեջ մտնել և վորոնք, ինչպես, որինակ, Խորհրդային Միությունը, «կապիտալիզմի զարգացման ավելի ցածր աստիճան» կամ՝ վատ կապիտալիզմ են ներկայացնում իրենցից: Դրա համար էլ, իբր թե խաղաղության ապահովության համար պետք է վերապետական որդան, Ազգերի Լիգան ստեղծվեր:

Կարիք չկա, իհարկե, կանգ առնել այս կեղծ թեորիան հերքելու վրա: Զարգացման անհավասարաչա-

փութլուէնը շուտ և տալիս միջազգային տեսական համաձայնութլուէններէ բոլոր փորձերը:

Այդպիսով մենք հասանք կապիտալիզմի ապագա զարգացման հարցին: Հիմնական հարց և ծագում՝ արդյոք հնարավոր է, վոր մոնոպոլիաներ կազմվելն իր զարգացման ընթացքում տանի դեպի միջազգային ընդհանուր տրեստի ստեղծումը, թե վոչ: Լենինը (Բուխարինի «Համաշխարհային տնտեսութլուէն և իմպերիալիզմ» գրքի առաջարանում, վորը հարկ յեղած ուշադրութլան դեռ չի արժանացել) հետևելալ կերպ և պատասխանում այս հարցին.


«Կասկած չկա, վոր զարգացումն ընթանում և միակ տրեստի, համաշխարհային, բոլոր պետութլուէններն առանց բացառութլան իր մեջ կլանող տրեստի ուղղութլամբ: Բայց զարգացումն այս ուղղութլամբ և գնում այնպիսի պայմաններում, այնպիսի տեմպով, այնպիսի հակասութլուէններով, կոնֆլիկտներով և ցնցումներով՝ վոչ միայն տնտեսական, այլ և քաղաքական, ազգային և ալն և ալն,—վոր անպայման ավելի վաղ, քան բանը միակ համաշխարհային տրեստին, մինչև ազգային ֆինանսական կապիտալների համաշխարհային, ուլտրա-իմպերիալիստական միավորութլան հասնելը, իմպերիալիզմն անխուսափելիորեն պետք և պայթի, կապիտալիզմը պետք է իր հակադրութլանը վերածվի»:

Լենինի այդ քննադատական նկատողութլուէնը միասնական, մրցութլուէնից ազատ կապիտալիզմ ստեղ-



ձեռն մասին՝ կամ միայն մի առանձին լեզվի ներ-
սում (Բուխարին), կամ համաշխարհային մասշտաբով
(սոցիալ-դեմոկրատներ)՝ միաժամանակ հանդիսանում
և գերիմպերիալիզմի թեորիայի քննադատութուն:







ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0045290

[104]

ԳԻՆԸ 5 ԿՈՊ. (1 Մ.)

A $\frac{1}{2423}$

ԾԱԾ



Ե. ՎԱՐԳԱ

„Проблема организованного капитализма“

Госиздат ССР Армении

Эривань 1930